**Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարեր**

**XII դասարան**

**(տևողությունը՝ 180 րոպե)**

1.Հայրենիքը Բակունցի ստեղծագործություններում («Ծիրանի փողը», «Լառ Մարգար», «Հին տանը»): Չարենցը՝ Բակունցին:

**5մ.**

2.Գուրգեն Մահարի: Հնգապատումը. ժանրը. պատմահասարակական նշանակությունը:

Վերլուծի՛ր «Բալլադ Չալոյի և առաջին սիրո մասին»: Սահյանը՝ Մահարուն:

**5մ.**

3.Վերլուծի՛ր Գեղամ Սարյանի «Քրիզանթեմ» բանաստեղծությունը:

Քրիզանթեմ, ճերմակ քրիզանթեմ
Վերջին ծաղիկ, աշնան վերջին հառաչ...
Ես քեզ էլ ի՞նչ սրտով բարի մաղթեմ,
Իմ Տխրություն՝ կանգնած աչքիս առաջ:

Դու բացվեցիր ձմռան նախադռան
Էլ քեզ ինչպես ասեմ՝ գալդ բարի,
Ես քեզ նման ճերմակ, Դու ինձ նման,
Շուտով կծածկի մեզ ձյունն աշխարհի

Շուտով կծածկի մեզ ձյունն աշխարհի
Ես քեզ էլ ի՞նչ սրտով բարի մաղթեմ,
Ճամփորդներ ենք մենք նույն ճանապարհի
Քրիզանթեմ, ճերմակ քրիզանթեմ :

**5մ.**

4.Պարույր Սևակի սիրային քնարերգությունը: «Ես չեմ ամաչում իմ սիրո համար» կարգախոսը՝ որպես սիրային քնարերգության ուղենիշ(«Առաջին սեր»,«Ես տասն եմ քո անունը»,«Նորից չեն սիրում, սիրում են կրկին»,«Երգ երգոց»,«Ուշացած իմ սեր»,«Նահանջ երգով» և այլն: Իհարկե, բոլորը պարտադիր չեն, բայց չորսը(ըստ ընտրության) պարտադիր է :

**5մ.**

**Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան**